«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախադպրոցական կարողունակությունների ձևավորման հիմնահարցը

Հաստատություն՝ «Ծիածան մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Քրիստինե Կարապետկան Սարգսի

ԳՅՈՒՄՐԻ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
ԳԼՈՒԽ 1
ՎԱՂ ԳՐԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴՊՐՈՑԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄԻՋՈՑ
1.1 Երեխաների մանկավարժական և հոգեբանական նախապատրաստումը դպրոցական ուսուցմանը 5
1.2 Գրագիտության հմտությունների ձևավորումը՝ որպես դպրոցական ուսուցմանը նախապատրաստվելու միջոց 7
1.3 Նախադպրոցական տարիքի երեխաների ակնկալվող կարողունակությունները 10
ԳԼՈՒԽ 2
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
2.1 Մանկապարտեզից դպրոց 14
2.2 Արդյունքների վերլուծություն 16
Եզրակացություն 17
Օգտագործված գրականություն 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը։ Հայաստանի Հանրապետությունում, կրթական բարեփոխումների համատեքստում, մասնավորապես դպրոցի՝ տասներկուամյա կրթության անցման և դրանից բխող վեց տարեկանների կրթության կազմակերպման ժամանակակից փուլում, երեխայի դպրոցական ուսուցման նախապատրաստումը ձեռք է բերում նոր հնչեղություն և կարևորություն, նոր բովանդակություն և սոցիալ-հոգեբանական նշանակություն։ Այս առումով նախադպրոցական կրթության ժամանակակից տեսության և պրակտիկայի առաջնահերթ խնդիր է դառնում դպրոցական ուսուցման նախապատրաստման հիմնախնդրի առավել խորը ուսումնասիրման անհրաժեշտությունը։ Արդի ժամանակներում առավել կարևորվում է նախադպրոցականի կարողությունների ձևավորման հարցը։

Աշխատանքի նպատակը։ Հետազոտական աշխատանքի նպատակն է նախադպրոցականի կարողությունների ձևավորման և դպրոցին պատրաստվածության հետևյալ կարևոր բաղադրիչները՝

1. Անձնային (դրդապատճառային) պատրաստվածություն, որն իր մեջ ներառում է երեխայի պատրաստվածությունը նոր սոցիալական դիրքին, այսինքն աշակերտի կարգավիճակին, աշակերտ, ով արդեն ունի որոշակի իրավունքներ և պարտականություններ։ Անձնային պատրաստվածությունը ենթադրում է նաև երեխայի դրդապատճառային ոլորտի զարգացման աստիճանի տարբերակումը։
2. Ինտելեկտուալ պատրաստվածություն, որը ենթադրում է երեխայի մտահորիզոնի և ճանաչողական գործընթացների զարգացման առկայություն։
3. Սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն, որն իր մեջ ներառում է երեխաների բարոյական և հաղորդակցական ունակությունների ձևավորումը։
4. Հուզակամային պատրաստվածություն, որը համարվում է ձևավորված, եթե երեխան կարողանում է իր առջև նպատակ դնել, որոշումներ ընդունել, գործողությունների պլան մշակել և մասնակցել դրանց իրականացմանը։ [5]

Նշվածների զարգացվածության բավարար մակարդակն էլ ապահովում է հետագա ուսումնական գործունեության արդյունավետությունը և դրանով իսկ վկայում երեխայի դպրոցական ուսուցման պատրաստվածության բարձր ցուցանիշների մասին։

Երեխաներին դպրոցական ուսուցմանը ժամանակին նախապատրաստելը նպաստում է նրանց մեջ ուսումնական աշխատանքի նկատմամբ սեր և հետաքրքրություն դաստիարակելուն, անհամեմատ հեշտացնում է մանկապարտեզային կյանքից անցումը դպրոցական կյանքին, ուսումնառությանը: Ապահովվում է նաև կրթության երկու աստիճանների՝ նախադպրոցական և դպրոցական տարրական ուսուցման միջև եղած անհրաժեշտ հաջորդականությունը:

Ելնելով դպրոց ընդունվող երեխաներին ներկայացվող արդի պահանջներից՝ հանձնարարվում է ավագ խմբում իրականացնել վաղ գրաճանաչության նախապատրաստում, որը հանդիսանում է մայրենի լեզվի բաժնի բաղադրիչներից մեկը: Վաղ գրաճանաչությանը վերաբերվող պարապմունքներն ունեն զարգացնող բնույթ: Վերլուծական, համադրական խոսքային վարժությունների համակարգի միջոցով ապահովվում է երեխաների մտավոր զարգացումը: Մտավոր զարգացումը կառուցվում է երեխաների կենդանի խոսքի, խոսքային կենսափորձի, կապակցված խոսքի համակարգի, խոսքային լսողության զարգացման հիման վրա:

Նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ **խնդիրները**.

- Ուսումնասիրել հետազոտվող թեման գիտամեթոդական գրականության մեջ և գործնականում
- Նախակրթարանում աշխատանքի փորձի դիտարկում և ուսումնասիրում,
- Սաների հետ գործնական աշխատանք,
- արդյունքների ամփոփում և վերլուծություն:

ԳԼՈՒԽ 1

ՎԱՂ ԳՐԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴՊՐՈՑԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄԻՋՈՑ

1.1 Երեխաների մանկավարժական և հոգեբանական նախապատրաստումը դպրոցական ուսուցմանը

Դպրոց ընդունվելը բեկումնային պահ է երեխայի կյանքում, անցում նոր սոցիալական պայմանների ու գործունեության ձևերի, հետևաբար պահանջում է դպրոցական ուսուցմանը երեխաների նախապատրաստման անհրաժեշտություն:

Ինչպես գիտենք, կրթության բոլոր օղակների միջև գոյություն ունի սերտ և տրամաբանական կապ, որն ապահովում է սահուն անցումը կրթության մի օղակից մյուսին և կրթական նպատակների ու խնդիրների արդյունավետ լուծումը: Այն առավել ընդգծված դրսևորվում է հատկապես մանկապարտեզի և դպրոցի միջև, մասնավորապես երեխայի դպրոցական ուսուցման նախապատրաստման առումով:

Երեխաների նախապատրաստումը դպրոցական ուսուցմանը մի կողմից ենթադրում է, որ նախադպրոցական հաստատությունները կոչված են երեխային դպրոց «հանձնել» անձի ձևավորման ու ընդհանուր զարգացվածության այնպիսի մակարդակով, որը համապատասխանում է դպրոցի պահանջներին, մյուս կողմից էլ՝ դպրոցը պետք է հիմնվի նախադպրոցականի ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և որակների վրա: Երեխայի դպրոցական ուսուցման նախապատրաստման նպատակը զարգացման բարենպաստ միջավայրի ապահովումն է, որտեղ ըստ ամենայնի կբացահայտվեն և կդրսևորվեն նրա ներքին հնարավորություններն ու կարողությունները, կզարգանան երեխայի հոգեկան, սոցիալական, ֆիզիկական կարողությունները, ինչն էլ կապահովի երեխայի հաջող մուտքն ու ուսումնառությունը դպրոցում, դպրոցական կյանքին նրա ադապտացիան:

Նախադպրոցական կրթության ժամանակակից տեսության և պրակտիկայի առաջնահերթ խնդիր է դառնում դպրոցական ուսուցման նախապատրաստման հիմնախնդրի առավել խորը ուսումնասիրման անհրաժեշտությունը: Ամենից առաջ պետք է ցրել մտայնությունն այն մասին, որ երեխայի նախապատրաստումը դպրոցին

տեղի է ունենում մանկապարտեզի վերջին տարիքային փուլում (և կամ էլ դպրոցական տարիքին նախորդող տարում)։ Դպրոցական ուսուցման նախապատրաստումը երկարատև և բարդ գործընթաց է, այն ընթանում է նախադպրոցական մանկության ողջ ընթացքում՝ երեխայի տարիքային առանձնահատկություններին համապատասխան։ Եվ թերևս չկա առավել կոնկրետ և կամ նպաստավոր ժամանակ այդ գործընթացի կազմակերպման համար։ Նախադպրոցական կյանքի բոլոր տարիներին երեխայի ձեռք բերած նվաճումները կուտակվում են և դպրոցի շեմին տալիս են որոշակի որակ։[3]

Ինչ խոսք, երեխայի դպրոցական ուսուցման նախապատրաստման անհրաժեշտությունը կասկած չի հարուցում։ Ընդ որում հարկ է, որ այն լինի նպատակաուղղված և համակարգված, ընթանա պարբերաբար՝ ընդգրկելով երեխայի կյանքի բոլոր ոլորտները։ Սակայն այդ աշխատանքները չպետք է վերածվեն ծանրաբեռնված վարժանքի և մարզման, այն պետք է ընթանա երեխայի բնական զարգացման, նրա ամենօրյա կյանքի, շփումների և խաղային գործունեության համատեքստում։ Եվ ամենակարևորն այն է, որ երեխայի հետ իրականացվող աշխատանքը պետք է զերծ լինի մեծահասակների զայրույթից և երեխաների արցունքներից։

Մի շարք հետազոտությունների տվյալներ ցույց են տալիս (Ս. Կ. Մարկովա, Ա. Բ. Օռլովա, Տ. Ա. Մարիս), որ դպրոցական պատրաստվածության արդյունավետ իրականացման հիմքը դպրոցի նկատմամբ երեխայի գիտակցական մոտեցման ձևավորումն է, իսկ վերջինս ձևավորվում է՝ կախված այն ինֆորմացիայի քանակությունից, որ երեխան տիրապետում է ընդհանրապես դպրոցի մասին։ Կարևոր է նաև այն, որ դպրոցի մասին տեղեկությունները երեխան ոչ միայն հասկանա, այլև զգա։ Հուզական փորձը օգնում է երեխային ընդգրկվել իր մտածողությունն ու հույզերն ակտիվացնող գործունեության մեջ։ Հուզական փորձը, սովորաբար, ձևավորվում է զրույցների, մեծահասակների կողմից իրենց հետաքրքիր դպրոցական կյանքի և սիրելի ուսուցիչների մասին կատարած պատմումների, դպրոցներում էքսկուրսիաներ կազմակերպելու, առաջին դասարանցիների հետ շփվելու, գեղարվեստական գրականություն ընթերցելու և այլնի միջոցով։ Փաստորեն դպրոցական ուսուցման նկատմամբ երեխայի հուզական փորձի ձևավորումը իր

հերթին նպաստում է դպրոցի նկատմամբ դրդապատճառային պատրաստվածության ձևավորմանը, ինչն էլ հենց հանդիսանում է երեխայի սովորելու ցանկությունը:

Երեխային դպրոցին նախապատրաստելու բարդ գործընթացում Վ. Վ. Դավիդովը կարևորում է երեխայի՝ մտավոր գործողություններ կատարելու, շրջապատող առարկաներն ու երևույթները առանձնացնելու և տարբերակելու, իր գործողությունները պլանավորելու ունակություններն ու կարողությունները, այսինքն նա առաջ է քաշում երեխայի դպրոցին ինտելեկտուալ պատրաստվածության հարցը:

Այսպիսով, եթե փորձենք ամփոփել երեխայի դպրոցին պատրաստվածության հիմնահարցի վերաբերյալ խորհրդային հոգեբանների մոտեցումներն ու տեսակետները, նրանց կատարած ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքները, ապա տեսնում ենք, որ այն բավականին լայն հասկացություն է և ընդգրկում է երեխայի զարգացման գրեթե բոլոր ոլորտները:

Դպրոց ընդունվող երեխան պետք է հասուն լինի մտավոր, հուզական և սոցիալական զարգացմամբ: Սա նշանակում է, որ պետք է զարգացած լինեն երեխայի՝

- տարբերակված ըմբռնումը, կամածին ուշադրությունը, վերլուծական մտածողությունը (մտավոր հասունացում),
- հուզական կայունությունը. ինքնաբուխ ռեակցիաների բացակայություն (հուզական հասունություն),
- հասակակիցների հետ հաղորդակցվելու պահանջմունք, մանկական խմբի պահանջներին և հետաքրքրություններին ենթարկվելու ունակությունը, դպրոցականի սոցիալական դերի գիտակցում և ընդունում (սոցիալական հասունացում):

1.2 Գրագիտության հմտությունների ձևավորումը՝ որպես դպրոցական ուսուցմանը նախապատրաստվելու միջոց

Այսօր դպրոցին ներկայացվող ժամանակակից պահանջներին զուգընթաց փոխվել են նաև մանկավարժներին ներկայացվող պահանջները: Գրաճանաչությունը մանկապարտեզում ստացել է նոր որակ:

Գրաճանաչության ուսուցման մեթոդիկան ստեղծվել է գրերի գյուտից անմիջապես հետո, գրավորի մշակույթի և դպրության սկզբնավորման հետ միաժամանակ:

Գրաճանաչության ուսուցման նոր մեթոդների ստողծման գործում մեծ նշանակություն են ունեցել Ֆ. Գիդեկենը, Հ. Ստեֆանին, որոնց ստեղծած մեթոդիկայի հիմքում ընկած էին հնչյունների համադրումը դեպի նոր ամբողջական միավորը՝ նախադասությունը և այդ միավորը վերլուծելու միջոցով դեպի խոսքի տարրական մասնիկները գնալու գիտակցության սկզբնավորումը։Ահա թե որոնք են նախնական գրաճանաչության ձևավորման գործընթացի բաղադրիչները։

Երեխաները, որպես կանոն, շատ վաղ են շփվում գրավոր լեզվի հետ։ Տանը նրանց համար գրքեր են կարդում, նրանք տանը և դրսում տեսնում են ամենատարբեր ցուցանակներ, պիտակներ և պատկերանիշեր։ Վաղ տարիքում երեխաները փորձում են նաև «գրել»՝ խզբզել։ Կարդալն ու գրելը վաղ տարիքում զարգանում են միաժամանակ և փոխկապակցված։ Երեխաները չեն սովորում նախ՝ կարդալ, իսկ հետո՝ գրել։ Իրականում գրելը՝ որպես վաղ ուսումնական գործունեություն, երեխաների համար ավելի հեշտ է, քան կարդալը։

Գրաճանաչությունը զարգանում է իրական կյանքի իրավիճակներում, որտեղ կարդալն ու գրելը ծառայում են որոշակի գործողություններին։ Երեխաները գրաճանաչություն են սովորում ակտիվ ներգրավվելով որոշակի գործունեության մեջ, օրինակ՝ իրենց սիրելի պատմություններն «ընթերցելու» միջոցով։ Երբ երեխան մատը, սահեցնելով գրքի տողերի վրայով, «վերընթերցում» է իր սիրելի գիրքը, նա անգիր չի կրկնում մտապահված տեքստը, այլ ավելի շուտ վերակառուցում է գրքի բովանդակությունը։ Կամ երեխաները հաճախ ձևացնում են, թե գրում են, Գրելու այդ նմանակումը մի ձև է՝ տեսնելու այն հնչյունների տարրերը, որոնք ծանոթ են երեխային։

Գրագիտության ուսուցման էությունը որոշելու համար նախ անհրաժեշտ է իմանալ ինչ առանձնահատկություններ ունի գրավոր խոսքը, և առաջնայինը կարդալ թե գրել իմանալն է։ Կարդալը և գրելը խոսքային գործունեության տեսակներ են, որոնց հիմքում ընկած է բանավոր խոսքը։ Երեխայի գրագիտության ուսուցման հիմք է հանդիսանում երեխայի ընդհանուր խոսքային զարգացումը։ Ազատ խոսքը կարևոր գործոն է գրավոր խոսքի ուսուցման համար։ Դա դպրոցին հոգեբանորեն նախապատրաստվելու կարևոր գործոն է։ [6]

Խոսքի ձևավորման, գրաճանաչության զարգացման, գրագիտության ուսուցման ցուցանիշներ են հետևյալ ունակությունները՝ ուշադրությունը սևեռել խոսքային խնդրին, ազատ կազմել մտքերը, մտածել, գնահատել խոսքը: Էլկոնինը իր ուսումնասիրություններում եկել է այն եզրահանգման, որ կարդալու ուսուցումն առավել հեշտ է բառերի վանկային վերլուծություն կատարելով, քանի որ վանկը բնական արտահայտչականության միավորն է: Կարդալու ընթացքում վանկատումը դժվարություն չի առաջացնում: Հայ գիրը հնչյունատառային է: Այն հստակ արտահայտում է խոսքը:

Այսօր կիրառվում են Էլկոնինի մեթոդը, Կիրյուշկինի, Շանկոյի, Գորեցկու հնչյունավանկային մեթոդները: Այս մեթոդների հիմքում ընկած է կարդալու տեսակետային սկզբունքը, օրինակ՝ տուն, տար, տիր, տեղ բառերի մեջ «տ» հնչյունն իր արտաբերումը փոխում է՝ կախված նրանից, թե ինչ հնչյուն է իրենից հետո: Երեխան պետք է կարողանա ճիշտ արտաբրել բաղաձայն և ձայնավոր հնչյունները բառերի մեջ: Կարդալու մեխանիզմի վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է մեծ նշանակություն տալ երեխայի հնչյունային լսողության զարգացմանը, որը մարդկային խոսքի հնչյուններն ընկալելու ընդունակություն է: Մանկան խոսքի զարգացման մի շարք ուսումնասիրությունները (Գվոզդև, Շվաչկին, Լյամինա) ցույց են տվել, որ հնչյունային խոսքը շատ վաղ է զարգանում: 2 տարեկան երեխան արդեն որոշակիորեն տիրապետում է մայրենի լեզվին, իսկ 5 տարեկան երեխան տիրապետում է խոսքի հնչյունային կողմին, և հենց այս տարիքն էլ կարելի է համարել բարենպաստ տառաճանաչության համար: Գրաճանաչության զարգացումը տեղի է ունենում ոչ միայն ավագ տարիքում, այլ ողջ նախադպրոցական մանկության շրջանում:

- 3-4 տարեկանում ձևավորվում է բառի հնչարտաբերումը;
- 4-5 տարեկանում երեխան գործնականում ծանոթանում է «բառ» և «հնչյուն» տերմիններին, դրանք կարողանում է կիրառել վարժությունների, խոսքային, բառային, խաղերի ընթացքում: Երեխան ծանոթանում է կարճ բառերին, ձայնավոր և բաղաձայն հնչյուններին:
- 5-6 տարեկան երեխային սովորեցնում են կատարել բառի հնչյունային վերլուծություն, տեղին կիրառել սովորած տերմինները:[2]

1.3 Նախադպրոցական տարիքի երեխաների ակնկալվող կարողունակությունները

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով:

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա վեց տարեկան երեխան: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Սահմանված հինգ՝ շարժողական, խոսքի և հաղորդակցման հուզական, սոցիալ-անձնային, իմացական, ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտներում, երեխաները պետք է տիրապետեն 9 կարողունակությունների՝

1. *լեզվական և հաղորդակցական կարողունակություն*՝ երեխան տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդունակ է ճանաչել բանավոր ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ: Երեխան ունակ է կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունի տարրական պատկերացումներ վանկի, հնչյունի և տառի մասին, ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին: Այլ մարդկանց հետ հաղորդակցության մեջ պատկերացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և մեծահասակների օգնությամբ կիրառում դրանք.
2. *ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն*՝ երեխան, իր տարիքին համապատասխան, ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների և օբյեկտների

կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծել: Դրսևորում է ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ: Երեխան հաճույքով (ակտիվ) ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ.

3. *ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն՝* երեխան ճանաչում է իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում սեռադերային պատկերացումներ: Երեխան ունի պատկերացում սեփական հնարավորությունների մասին, վստահություն սեփական ուժերի և կարողությունների հանդեպ: Ընդունակ է ինքնակազմակերպվելու, դրսևորում է ինքնուրույնություն և ինքնասպասարկման հմտություններ: Գործողություններում դրսևորում է նպատակաուղղվածություն և կենտրոնացվածություն: Երեխան ճանաչում է սեփական և այլոց հույզերը, կարողանում է կառավարել սեփական հույզերը: Ճանաչում է մեծահասակների և հասակակիցների փոխհարաբերություններում սահմանված վարքային կանոնները և դրսևորում է սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք: Շփման մեջ նախաձեռնող և կառուցողական է, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելու հմտություններ.

4. *ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն՝* նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին. դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը: Ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները (դրոշ, զինանշան, օրհներգ), դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ: Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին.

5. *թվային և մեդիա կարողունակություն՝* երեխան ունի տարրական պատկերացումներ մեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բազմազանության մեջ, մեծահասակի աջակցությամբ գնահատում է

ներկայացված տեղեկատվությունը, այն համադրում սեփական պատկերացումներին՝ դրսևորելով քննադատական և ընտրողական մոտեցում: Երեխան կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից՝ միևնույն ժամանակ հասկանալով դրանց կիրառման հնարավոր վտանգները և այդ հարցում սեփական պատասխանատվությունը: Երեխան դրսևորում է առարկաների, երևույթների մոդելավորման և ստեղծագործական կարողություններ, տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները.

6. *մշակութային կարողունակություն* ՝ երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ հայ և արտասահմանյան մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները, ճանաչում է ազգային և համաշխարհային մշակութային նմուշների ինքնատիպությունը: Դրսևորում է ընդգծված հետաքրքրություն գեղարվեստական գործունեության հանդեպ, ունակ է երաժշտության, կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների, ազգային տոների ու ավանդույթների միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները.
7. *մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն* ՝ երեխան կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում է թվանշանները, տիրապետում է նախաթվային և թվային հասկացություններին. երեխան կարողանում է որոշել առարկաների քանակը, համեմատել դրանք ըստ մեծության, չափի, ձևի և գույնի, տարբերակել մասը և ամբողջը, երկրաչափական պատկերներն ըստ հատկանիշների: Կարողանում է առարկաները տարբերակել նաև ըստ նյութի: Ցուցաբերում է հետաքրքրություն սարքավորումների հանդեպ, կարողանում է ծանոթ տեխնիկական հանգույցներից կառուցել նոր համադրություններ.
8. *տնտեսական կարողունակություն* ՝ երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Գիտի տարբեր մասնագիտությունների անվանումներ և դրանց առանձնահատկությունները: Ցուցաբերում է տնտեսական պարզ

հասկացությունների իմացություն, գիտի իր հետ առնչվող առարկաների ձեռքբերման եղանակները, կիրառում է տնտեսական պարզ բառապաշար: Երեխան հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունն ու փոխկապակցվածությունը: Ճանաչում է բնության երևույթները, գիտի բնության առանձին երևույթների վտանգների, դրանցից պաշտպանվելու մասին, անվտանգ վարքագիծ է դրսևորում բնության առանձին երևույթների՝ կայծակի, ամպրոպի, կարկուտի, անձրևի, մառախուղի ժամանակ: Ունի տարրական պատկերացումներ շրջակա միջավայրի և դրա պահպանման վերաբերյալ: Կարողանում է նկարագրել մարդու և տնտեսության ազդեցությունը բնության վրա: Հասկանում է շրջակա միջավայրի պահպանման գործում սեփական դերը, նշանակությունը և մասնակցում է այդ գործընթացում.

9. *Ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն՝* երեխան պատկերացում ունի ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների՝ օրգանիզմի կոփման, օրվա ռեժիմի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին: Ընկալում է ֆիզիկական վարժությունների ճիշտ կատարման ձևը, ճանաչում և տարբերում է ամառային և ձմեռային մարզաձևերը: Ընդհանուր պատկերացում ունի շարժողական ընդունակությունների, տարածված մարզաձևերի, մարզագույքի, սպորտային հանդերձանքի մասին, ճանաչում է հայ և այլազգի անվանի մարզիկներին: Երեխան ընդունակ է ճիշտ կատարելու մարմնամարզական, աթլետիկական վարժություններ, տարաբնույթ շարժողական գործողություններ շարժախաղերում, մարզախաղերում, շարժողական ակտիվության այլ ձևերում: Դրսևորում է անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն և պահպանում է առողջ ապրելակերպի վարման կանոնները: Երեխան ինքնուրույն կատարում է նմանողական շարժումներ, ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանձին, զույգերով, մարզագույքով: Վարժությունների կատարման ընթացքում, շարժախաղերում, թիմային խաղերում դրսևորում է ինքնուրույնություն, կարգապահություն, կամք, պատասխանատվություն, համագործակցություն, վճռականություն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնողականություն:

ԳԼՈՒԽ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1 Մանկապարտեզից դպրոց

Ինչպես արդեն նշեցինք նախադպրոցական կարողությունների ձևավորում նշանակում է իրականացնել երեխաների զարգացման և կրթական ընդհանուր նպատակներին համապատասխան հատուկ աշխատանք: Եվ քանի որ կարևորվում է երեխայի՝ մանկապարտեզից դպրոց անցումային շրջանի հոգեբանական խնդրի հաղթահարումը՝ մենք որոշեցինք պարապմունքը կազմակերպել այնպես, կարծես արդեն հաճախում են դպրոց:

-Երեխաներ ահա պատկերացրեք, թե մեր խմբասենյակը դպրոց է, իսկ դուք աշակերտներ: Մենք արդեն դպրոցում ենք, դուք մեծացաք ու դարձաք աշակերտներ: Քանի որ արդեն մեծ եք կկարողանաք գուշակել.

Բարակ փայտիկ է,

նման մատիդ,

քիթը մրոտ է,

անունը.... (մատիտ)

Նա փայտեր է իրար կարում,

Երբ որ մուրճն է գլխին պարում: (մեխ)

Պատասխանները լսելուց հետո սաներին տալիս ենք հետևյալ հարցերը.

- Երեխաներ հիշեք հանելուկները, ո՞ր հնչյունով էին սկսվում
- Ի՞նչ նոր հնչյուն այսօր լսեցինք,
- Իսկ ի՞նչպիսին է այդ հնչյունը՝ ձայնավոր թե՞ բաղաձայն;
- Իսկ դուք ցանկանում եք իմանալ ի՞նչ տառով է այն գրվում:

-Այսօր մենք միասին կսովորենք «Մ» հնչյուն-տառը: «Մ» հնչյունը արտասանելիս մեր շրթունքները ամուր կպչում են իրար: Ցույց տալով «Մ» տառը, խմբով արտասանեցինք և երեխաների ուշադրությունը հրավիրեցի հնչյունի ճիշտ արտաբերման վրա:

Մենք սաների ուշադրությունն ու հետաքրքրությունն պահպանելու համար միացրեցինք երգող այբենարանի Մ տառի հատվածը: Սաներին շատ դուր եկավ:

Որից հետո առաջարկեցինք միասին բարձրաձայն արտասանել հետևյալ հնչյունակապակցությունները.

Մի, մո, մու, մը, մա, մե;

Մը, մա, մու, մե,մո, մի։

Ֆիզկուլտդադարներ <u>Ամպիկ</u>, <u>Կաթիլ</u>

– Եկե՛ք ծափ տանք գլխից վերև՝ 1, 2, 3,

Երեք ծափ էլ առջևում՝ 1, 2, 3,

Նույնքան ծափ էլ ներքևում՝ 1, 2, 3:

Ծափիկները արագացնենք,

Անձրևի կաթիլ դարձնենք:

-Իսկ այժմ եկեք միասին արտասանենք շուտասելուկ, ով ճիշտ կարողանա ինքնուրույն ասել, ապա կստանա նվեր «Մ» տառը։

Մկրատ տամ մկրատ տուր,

Մտրակ տոր, մկրատ տամ։

-Երեխաներ այժմ միասին կխաղանք «Կախարդական տուփ» խաղը։ Այս տուփում գտնվող բոլոր առարկաների մեջ կա «մ» հնչուն-տառը։ Դուք պետք է ասեք, որտեղ է գտնվում «մ» հնչյուն-տառը՝ բառասկզբում, բառամիջում թե՞ բառավերջում։

-Այժմ դուք մտածեք բառեր, որտեղ «Մ» հնչյունը գտնվում է բառամիջում։

Սաները մեծ ոգևորությամբ խաղացին ու մենք նկատեցինք, որ իրենք խաղալով սովորեցին ու ընկալեցին նյութը։

-Ապրեք երեխաներ։ Դուք արդեն գիտեք, որ ամեն մի հնչյուն ունի իր տառը։ «Մ» հնչյունի տառը «Մ» -ն է։ Այժմ ես ձեզ կբաժանեմ «Մ» հնչյուն-տառի որվագիծը և «Ներկիր ինքդ» տետրը, այն ուրվագծեք և ներկեք վրայի պատկերված նկարները։

Պարապմունքը ավարտեցինք հարցերի միջոցով ամփոփելով «Մ» հնչյուն- տառը։

Պարապմունքը նպաստեց.

- Զարգացնել՝ լսողական և տեսողական հիշողությունը, կամային ուշադրությունը, տրամաբանական մտածողությունը, երևակայությունը, հնչունային լսողությունը, տեսողական ընկալումը, մանր մոտորիկան, գոյականներ կազմելու ունակություն. Խոսքը՝ խոսքի ինտոնացիոն արտահայտչականությունը, կապակցված խոսքը, բանավոր խոսքը։

- Ձևավորել՝ առաջին բաղաձայն հնչյունը մեկ բառով ընդգծելու ունակություն. Որոշել ձայնի տեղը բառի մեջ, ընթերցանության նախնական հմտություն, սաների բառապաշարը համալրել ուսումնասիրվող հնչյուն- բառերով:

2.2 Արդյունքների վերլուծություն

Մենք մեր ուսումնասիրության ընթացքում նկատեցինք, որ գրաճանաչության պարապմունքների ընթացքում հարկավոր է կարևորել զարգացնող խնդիրների իրականացումը և ակտիվացնել սաների հոգեկան գործընթացները՝ ուշադրությունը, հիշողությունը և մտածողությունը, ամրապնդել կամքը: Անհրաժեշտ եղավ հղկել սովորողների հույզերը, զգացմունքները, այսինքն՝ ողջ հոգեկան աշխարհը: Հղկել ասելով ի նկատի ունենք երեխայի հետ լինել հավասարը հավասարի, որ կարողանանք հասկանալ իրենց: Մենք հասկացանք, որ գրաճանաչության գործընթացը զարգացնող դարձնելու հիմնական պահանջներից են երեխաների ուսումնական գործունեությունն ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի վերածումը և խորհրդանշանային զննականության օգտագործումը: Հաշվի առնելով, սաների տարիքային առանձնահատկությունները՝ ծրագրային խնդիրների լուծումն իրականացվում է ընդհանուր զարգացմանը միտված բազմազան խաղերով, դիդակտիկական վարժություններով, հանելուկ-խնդիրներով և շուտասելուկներով հագեցված պարապմունքների միջոցով: Խաղային մեթոդներով անցկացվող թատերականացված պարապմունքներն ուսուցանվող նյութը դարձնում են առավել հետաքրքիր, մատչելի և բովանդակալից: Սաները մտնելով դերի մեջ էլ ավելի մեծ հետաքրքրությամբ սովորեցին ստացած նյութը:

Այս ամենից մենք հետևություն արեցինք, որ ամրապնդումը նույպես պետք է կազմակերպել այլընտրանքային տարբերակով: Սաների ծնողների հետ զրույց ենք անցկացրել և առաջարկել սաներին տանել տառերի պուրակ էքսկուրսիայի և հետևել, թե կկարողանան գտնել նշված տառը:

Պարապմունքին՝ որպես դիտարկող, ներկա էին նաև հաստատության տնօրենը և մեկ դաստիարակ: Նրանք եկան այն եզրակացության, որ սաներն ունեին բավականին գիտելիքներ և սիրով մասնակցում էին ընթացքին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի իրականացումը, տեսական գրականության ուսումնասիրությունը և վերլուծությունը մեզ բերեցին հետևյալ եզրահանգումների. Եթե փորձենք ամփոփել սանի դպրոցին պատրաստվածության հիմնահարցի վերաբերյալ խորհրդային հոգեբանների մոտեցումներն ու տեսակետերը, նրանց կատարած ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքները, ապա տեսնում ենք, որ այն բավականին լայն հասկացություն է և ընդգրկում է սանի զարգացման գրեթե բոլոր ոլորտները: Նրանք առանձնացնում են դպրոցին պատրաստվածության հետևյալ բաղադրիչները.

- անձնային (դրդապատճառային) պատրաստվածություն;
- ինտելեկտուալ պատրաստվածություն,
- սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն,
- հուզակամային պատրաստվածություն:

Նշվածների զարգացվածության բավարար մակարդակն էլ ապահովում է հետագա ուսումնական գործունեության արդյունավետությունը և դրանով իսկ վկայում սանի դպրոցական ուսուցման պատրաստվածության բարձր ցուցանիշների մասին:

Նախնական գրաճանաչությունը ենթադրում է, որ մինչև դպրոց գնալը սանը պետք է.

- Իմանա գրավոր խոսքի այբբենական բնույթի մասին.
- Իմանա որոշ ուղղագրական հասկացություններ.
- Կարողանա լսել, հասկանալ բանավոր խոսքը, հաղորդակցվել,
- վերարտադրել լսածը, սեփական կարծիք հայտնել:

Սանի նկատմամբ ճիշտ մոտեցումը և նրա խելամիտ դաստիարակությունը հաջող ուսուցման հիմքն են:

Այսպիսով կարող ենք փաստել, որ նախադպրոցականի կարողությունների ձևավորման հիմնահարցը կայանում է հետևյալում՝ անձի մեջ հետաքրքրություն արթնացնել դեպի դպրոցը, ուսումը, մշակել համառ ու հաստատակամ աշխատելու կայուն սովորություններ, մշտական հետաքրքրություն դաստիարակել պարապմունքների նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լ. Մանուկյան; Լ. Սմբատյան; Լ. Սարգսյան «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում» Երևան 2008 էջ 3-14
2. Հասմիկ Միտոյան, Լալա Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան, 2010թ.
3. Սարգսյան Ա. Երեխայի հոգեբանական պատրաստությունը դպրոցական ուսուցմանը: Երևան, 1998.
4. Վորլդ Վիժն «10 հարց ու պատասխան 3-6 տարեկան երեխաների մասին»; Երևան 2017; էջ 21-23
5. А. И. Воскресенской: Грамота в детском саду. — М., 1965
6. Венгер. Л. А. Психологические вопросы подготовки детей к обучению в школе (Дошкольное воспитание №4, 1970)
7. Журова Л.Е. Обучение грамоте в детском саду. — М.: Просвещение, 2004
8. Кравцова Е. Е. Психологические проблемы готовности детей к обучению в школе. М. 1993, -152 ст
9. Некрасова Т.П.// Начальная школа плюс до и после. — 2013. — № 9. — С. 64-68.
10. Նախաշավիղ 2009/25/